

ՄԱՌԻՑ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՔԱԴՄԻԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ. ԹԱՆՁԻՍԱԹԻՑ ՄԻՆԵՐԵԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան կայսրության վերջին վահա-մյուվիս¹ և պետական գործիչ Արդուրահման Շերեֆի (1853-1925) կյանքը և գործունեությունը ժամանակագրական առումով համընկավ Թուրքիայի պատմության բեկումնային շրջանի հետ՝ Թանազիմաթ, առաջին Սահմանադրության ընդունում, զուլումի տարիներ, երիտթուրքական հեղաշրջում, Առաջին աշխարհամարտ, Հայոց Մեծ Եղեռն, Թուրքիայի Հանրապետություն: Նրա կենսագրության հանգուցային կետերի ուսումնասիրումը կարող է լրացուցիչ լույս սփռել վերը հիշատակված իրադարձությունների, որոնց ամփոփական ականատեսն ու մասնակիցն է եղել Շերեֆը՝ որոշ մանրամասներին, ինչպես նաև դրանց առընթություններին հայկական խնդիրների հետ²:

Արդուրահման Շերեֆը ծնվել է Ստամբուլում 1853թ.-ին, պալատական քարտուղարի (kâtip) ընտանիքում: Բարձրագույն կրթությունը ստացել է Ստամբուլի Մուքթանիյե դպրոցում, ավարտելով թուրքերեն և ֆրանսերեն լեզվի և պատմության բաժինները: Իր գործունեությունը սկսել է որպես ընդհանուր պատմության ուսուցիչ, այնուհետև դարձել է դպրոցի տնօրեն: 1895թ.-ին նշանակվել է հանրահայտ Գալատասարայ վարժարանի տնօրեն: 1905թ.-ից սկսած, Սահմանադրության վերահռչակումից հետո զբաղեցրել է մի շարք պետական պաշտոններ կայսրության բարձրագույն ատյաններում՝ Օսմանյան կայսրության խորհրդարանի վերին պալատի անդամ (Ayan Meclisi), կրթության նախարար Հուսեյն Հիլմի-փաշայի կաբինետում, 1909թ.-ից մինչև 1919թ. եղել է վահա-մյուվիս, հանդիսացել է 1909թ. ստեղծված «Օսմանյան պատմական ընկերության» առաջին նախագահը և, վերջապես, 1923թ., ընտրվելով պատգամավոր Ստամբուլից, մասնակցել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի աշխատանքներին, ավելին՝ լինելով մեջլիսի ամենատարեց անդամը, հենց նա է բացել ժողովի աշխատանքները:

Արդուրահման Շերեֆ-պատմագիրը մեծապես ազդվել է իր նախորդների՝ Մհմեդ Ջեդեթ-փաշայի և Վեֆիկ-փաշայի աշխատություններից: Թանազիմաթի շրջանի ակնավոր պատմագիր, ուլեմ⁴, պետական գործիչ Մհմեդ Ջեդեթը չնայած մեղրեսում ստացած կրթությանը, իր պատմական աշխատություններում օգտագործել էր որոշ արևմտյան աղբյուրներ, որոնք թուրքերեն էին թարգմանվել և հրատարակվել Եգիպտոսում: Պատմագիր Վեֆիկ փաշան, որը թուրք դիվանագետի որդի էր և որոշ ժամանակ կրթվել էր Փարիզում, իր աշխատություններում օսմանյան պատմությունը շարադրելով ավանդական գահառոհական սկզբունքներով, այնուամենայնիվ փորձել էր բաժանել այն որոշակի ժամանակաշրջանների՝ ծավալման, հզորության և անկումի⁶: Դեռևս Գալատասարայի վարժարանում իր տնօրինության տարիներին Շերեֆը ծանոթանում է այն դասագրքերին՝ և

մեթոդներին, որոնցով դասավանդվում էր պատմությունը նույն վարժարանի ֆրանսիական և հայկական բաժանմունքներում: Այդ ստումով ոչ մահմեդական (հայական և հունական) կրթօջախները, ինչպես գրում են Ա. Ժելտյակովը և Յու. Պետրոսյանը, միշտ էլ օրինակ են եղել թուրքերի համար⁸: 19-րդ դարի վերջում (1307/1890թ. և 1315/1898թ.) Աբդուրրահման Շերեֆը հրատարակում է երկու աշխատություն՝ «Tarih-i Osmani» և «Fezleke-i tarih-i Devlet-i Osmaniyye» («Օսմանյան պատմություն» և «Օսմանյան պետության ամփոփ պատմություն»), որոնք բոլորովին նոր խոսք էին թուրքական պատմագրության մեջ: Յուրովի սինթեզելով իր նախորդների՝ Մեմեդ Ջեդեթի և Վեֆիկ-փաշայի մոտեցումները պատմության շարադրանքին, լայնորեն օգտագործելով եվրոպական աղբյուրները, Շերեֆը դիտարկում է օսմանյան պատմությունը համաշխարհային պատմության ենթատեքստում, փորձում է չսահմանափակվել իրադարձությունների լոկ շարադրմամբ, այլ բացահայտել դրանց պատճառահետևանքային կապերը: Շերեֆը առաջինն էր թուրք պատմագիրներից, ով իր «Tarih»-ում տեղադրեց ծանոթագրություններ, հղումներ աղբյուրներին, բազմապիսի քարտեզներ: Շերեֆի պատմությունը որոշ մասնագետների կարծիքով «առաջին թուրքական գիտական պատմագրական աշխատությունն էր, որը ստեղծվել էր թուրք հեղինակի կողմից»: Այդ աշխատությունը իր կրկնօրինակումներն է ունեցել նույնիսկ համրապետական շրջանում¹⁰: Օսմանյան կայսրության բարձրագույն ուսումնական հաստատությունների համար գրված իր մեկ այլ դասագրքում՝ «Cografya-i Umumi»-ում («Ընդհանուր աշխարհագրություն») նա առաջին անգամ շրջանառության մեջ է դնում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «Hukümet-i mütemme» (բացաքճան միապետություն), «Hukümet-i mesrûta» (սահմանափակ միապետություն) և «Hükümet-i cumhuriyye» (ժողովրդավարական պետություն), որպես արդի աշխարհում գոյություն ունեցող պետությունների կառավարման տարբեր համակարգեր¹¹:

Աբդուրրահման Շերեֆի լուրջ մտավորականի և ազնիվ պաշտոնյայի հեղինակությունը հիմք են հանդիսանում, որպեսզի երիտթուրքական հեղաշրջումից և Մահմաճանադրության վերահռչակումից հետո նա նշանակվի վակաա-մյուլիս (1909թ.) և այնուհետև նորաստեղծ «Օսմանյան պատմական ընկերության» (Tarih-i Osmânî Encümeni) նախագահ:

Ինչպես նշվում էր «Ընկերության» կանոնադրության մեջ, այն հիմնադրվել էր սուլթան Մեմեդ Ռեշադի հրամանագրով (irade) և նյութական աջակցությամբ որպես պատմագիտական հանձնաժողով, որի առաքելությունն էր կրթօջախների համար Օսմանյան կայսրության պատմության նոր և համապարփակ դասագիրք պատրաստելը¹²: Այդպիսի պատմության ստեղծման հիմնական նպատակներից էին հայտարարվում՝ պետության բոլոր «էլեմենտների»՝ (unsurlar)¹³ մեկը մյուսին ճանաչելը, իրար նկատմամբ անվտանգության և ատելության (nefret) հաղթահարումը, «գիտելիքների հորիզոնի ընդլայնումը»: «Ընկերության» ստեղծման մասին հռչակագրում նշվում էր նաև, որ միմյանց և ընդհանուր պատմությանը հաղոր-

դակից լինելով, կայսրության տարբեր ժողովուրդները կգիտակցեն մի պետության մեջ միահամուռ ուժերով գոյատևելու անհրաժեշտությունը և սեր կտածեն ընդհանուր օսմանյան հայրենիքի (vatan-ı müstereke) հանդեպ¹⁴։ Սա, անշուշտ, այն ժամանակվա պաշտոնական գաղափարախոսության օսմանիգմի դրսևորումն էր, գաղափարախոսություն, որով երիտթուրքերը փորձում էին փրկել ազգային-ազատագրական շարժումներից մասնատվող օսմանյան բռնապետությունը։ «Օսմանյան պատմական ընկերության» անդամներ էին ժամանակվա հայտնի հասարակական գործիչներ, պատմաբաններ, հրապարակախոսներ՝ Ստամբուլի թանգարանների վարիչ Հալիլ Էդեմ Էլդեմը, Հնագիտական հանձնաժողովի նախագահ Ալի Էմիրին, Ստամբուլի համալսարանի դասախոս Մեհմեդ Ֆուադ Զյուրուլուն, Շանսեղդին Սամին և Ահմեդ Ռեֆիկը (Ալթընայ)։ Վերջինս պատկանում է այն թուրք պատմաբանների շարքին, որոնք Առաջին համաշխարհային պատերազմից հետո հանդես եկան աշխատություններով, որոնցում թեև հայերի կոտորածի փաստը չէր ժխտվում, սակայն վիճարկվում էր այդ ոճրագործության կազմակերպված բնույթը, կամ ներկայացվում որպես երկկողմանի բախում¹⁵։

Արդյուրահաման Ըերեֆի պնդմամբ «Ընկերության» աշխատանքների մեջ ներգրավվեցին մաս ոչ թուրք մասնագետներ՝ Խորհրդարանի պալատի անդամ սերբ Իսկանդեր Յանկո Հուջին, մեջլիսի պատգամավոր հույն Կառուիդին, Մուտավիդիս Զրիստովուլուսը, հայ լրագրող, «Մաբահ» թերթի խմբագիր Տիրան Զեյթյանը ։

Ըերեֆի համոզմամբ, օսմանյան կայսրության համապարփակ պատմություն գրելու համար անհարժեշտ էր օգտագործել ոչ միայն թուրքական աղբյուրներ, այլ մաս բյուզանդական և հայկական, քանի որ իր մտահոգմամբ, շարադրանքը պետք էր սկսել այն ժամանակաշրջանից, երբ թուրքերը Անատոլիայում հիմնում են առաջին պետությունը (սելջուկներ) և, բնականաբար, առնչվում են «այլ ժողովուրդների պետական միավորումների հետ»¹⁶։ «Ընկերությունը» ձեռնամուխ է լինում մաս սեփական ամսագրի հրատարակմանը։ Ամսագիրը, “Tarih-i Osmani Encümeni Mecmuası”-ն առաջին թուրքական պարբերականն էր, որն օսմանյան հասարակությանը ծանոթացնում էր արդի պատմագիտական ձեռքբերումների հետ, հրատարակում էր հազվագյուտ փաստաթղթեր, հուշագրություններ, համաշխարհային և սեփական պատմության ակնառու դեմքերի կենսագրություններ։ Պարբերականը լույս էր տեսնում մինչև 1928թ., նրա երկու համարները լույս տեսան արդեն 1930թ.-ին, մոր այբուբենի ներդրվելուց հետո (yeni seri)¹⁷։

«Mecmuas»-ի ամբողջական տեսությունը թույլ է տալիս միանշանակ արձանագրել, որ ոչ թուրք հեղինակների ներկայությունը պարբերականի էջերում զգալիորեն զիջում էր նրանց թուրք համագործակիցների հրապարակումներին։ Նշված փաստը ամերկյա բացահայտումն է օսմանիգմի իրական էության, որը թեև հայտարարում էր, որ բոլոր ժողովուրդները կայսրությունում համահավասար են, սակայն իրականում թուրքերն «ամե-

նահավասարն» էին:

Անհրաժեշտ է ընդգծել, որ «Encümen»-ի «Օսմանյան պատմության» նախագիծը, իր բոլոր թերություններով հանդերձ, առաջին և վերջին փորձն էր Թուրքիայի ողջ պատմության ընթացքում, ներկայացնել այն պետության ոչ-թուրք ժողովուրդների մասնագետների մասնակցությամբ: Այդ նախագիծը այդպես էլ երբեք չիրագործվեց:

1913թ.-ին մամուլում լայն քննարկման համար հրապարակվելուց հետո, նախագիծը սուր քննադատության արժանացավ «Türk Yurdu» պամֆլետիստական ամսագրի էջերում¹⁹: Քննադատական հոդվածի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Յուսուֆ Աքչուրան էր²⁰: Նա գրում է, որ օսմանյան պատմությունը պետք է ներկայացված լինի որպես ընդհանուր թյուրքական պատմության (türk irki tarihi) մի մասը միայն, որ մոռացված է ժողովրդի արարողական դերը պատմության մեջ, որ չի կատարված համապատասխան սոցիալ-տնտեսական վերլուծություն և, վերջապես, ոչ մի տեղ չի հիշատակված «türk» բառը: Հոդվածագիրը առաջարկում էր նաև հանել շարադրանքից այն մասերը, որոնք նվիրված են թուրքերի Փոքր Ասիա և Եվրոպա ներխուժելուց առաջ այստեղ ապրող և պետություններ ունեցող ժողովուրդների պատմությանը: Մա, իհարկե, հետևանք էր Բալկանյան պատերազմից հետո Թուրքիայում ուժգնացող ազգայնական տրամադրությունների՝ օսմանիզմի գաղափարախոսությանը փոխարինում էր պամֆլետիստիկը:

«Encümen»-ի նախագահ Աբդուրրահման Շերեֆը կտրականապես դեմ էր նախագծի փոփոխմանը, որի կողմնակիցներից էին Ահմեդ Ռեֆիկը և Ֆուադ Զյուհրուլուն: Չհամարձակվելով բացահայտորեն հակադրվել նախագահի հեղինակությանը, նրանք մամուլի էջերում երկար վիճաբանություն են սկսում «Ընկերության» կանոնակարգի շուրջ, որի իրական նպատակն էր որպես համահեղինակ (Սեհմեդ Արիֆի հետ, որին հանձնարարված էր առաջին հատորի կազմումը) ներգրավել իր ծայրահեղ ազգայնական հայացքներով հայտնի Նեջիբ Ասըմին²¹:

Այդուհետ բանասարկությունները, «Encümen»-ի նախագահի դեմ երկիմաստ դեմարշները սովորական երևույթ դարձան «Ընկերության» աշխատառժում: Գրքի առաջին հատորի հեղինակ Սեհմեդ Արիֆի անսպասելի և երկարատև «հիվանդության» պատճառով, աշխատանքը միանձնյա կատարում էր Նեջիբ Ասըմը:

Ի պատասխան սուրբանական պալատից հնչող անվերջ ակնարկներին առ այն, որ «Ընկերությանը» տրամադրված գումարները արդյունք չեն տվել պատրաստի աշախատության տեսքով, չունենալով այլընտրանք, «Encümen»-ը հրատարակման է հանձնում Ասըմի հեղինակած գիրքը: Այն լույս տեսավ 1917թ. «Թուրքերի պատմությունը» վերնագրով և լի էր ծայրահեղ ազգայնական և մույնիսկ ռասիստական դատողություններով: Օրինակ, թուրքերի ամենարժանի հատկանիշներից էր, ըստ Ն. Ասըմի, նրանց ռազմական տաղանդը, իսկ թուրքերի վարած պատերազմները միշտ կրել են «քաղաքակրթական» բնույթ, քանի որ առանց պատերազմելու հնարա-

վոր չէր «մշակույթն ու օրենքը տարածել»²²։ Այսպիսով, Բալկանները կորցնելուց և Հայկական Հարցը թուրքական ձևով լուծելուց հետո «էլեմենտների» ընդհանուր հայրենիքի գաղափարին միտված պատմության դասագիրք ստեղծելը կորցրել էր իր իմաստը։

Ուշագրավ է ևս մի փաստ «Էնսմեն»-ի գործունեությունից։ Քանի որ «Ընկերության» առաքելություններից մեկը պատմական հիշարժան փաստաթղթերի հրապարակումն էր, նրան վերապահված էին արտակարգ լիազորություններ՝ պետական կարևորագույն արխիվներից օգտվելու համար (Sadaret Hazine-i Evrakı)։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արդուրահման Երեմյան պաշտոնական պատմագիր էր (vakaa-nüvis), մա միանձնյա էր կատարում փաստաթղթերի հետ կապված աշխատանքը։ 1917թ. ամռանը, երբ Երեմյան արխիվային ուսումնասիրություններ կատարելու նպատակով մեկնել էր Բեռլին, Ահմեդ Ռեֆիկը «Էնսմեն»-ին անհրաժեշտ և շտապ արխիվային հետազոտություններ կատարելու պատրվակով կարողանում է ստեղծել մի նոր կառույց՝ «Tasnif-i Vesaik-i Tarihiye Encümen» (փաստաթղթերի դասակարգման բաժին ընկերության շրջանակներում)։ Նման զուգահեռ կառույցի ստեղծումն առաջին հայացքից անիմաստ է թվում։ Սակայն, եթե ի նկատի ունենանք, որ Ահմեդ Ռեֆիկը սերտորեն կապված էր «Իթթիհատի» հետ, և որ 1917թ. արդեն ակնհայտ էր Թուրքիայի պարտությունը Առաջին աշխարհամարտում, պատճառաբանված ենք համարում երիտթուրքերի՝ ոչ իրենց լիազորության տակ գտնվող փակ պետական արխիվներին հասու լինելու ցանկությունը։ Մեր այս ենթադրությունը հիմնված չէ որևէ որոշակի աղբյուրի վրա, սակայն երիտթուրքերի պարագլուխների փախուստից առաջ փաստաթղթերի «դասակարգման», այսինքն՝ գտման խնդիրը իրենց կուսակցության համակիրին հանձնարարելը միանգամայն տրամաբանական է թվում։

Ձևականորեն Երեմյան «Encümen»-ի նախագահ մնաց մինչև իր կյանքի վերջը (1925թ.), սակայն այնտեղ գործնականում տիրում էին ծայրահեղ ազգայնական հայացքներ ունեցող պատմաբանները՝ Ահմեդ Ռեֆիկը, Նեջիբ Ասըմը, Ֆուադ Ջյուփրուլուն և Յուսուֆ Աքչուրան, որն այդ ժամանակահատվածում նույնպես դարձավ «Ընկերության» անդամ։ «Mecmua»-ի այդ տարիների հրապարակումներից շատերը զուտ քաղաքական բնույթ էին կրում, մինչդեռ Երեմյան կարծիքով, իրադարձություններին պատմական, այլ ոչ թե քաղաքական գնահատական տալու համար, դրանց պետք է անդրադառնալ 30 տարուց ոչ շուտ²³։

Մեր կարծիքով Երեմյան երբևի համակրանք չի տածել երիտթուրքերի նկատմամբ, համարելով նրանց «devrimci» (հեղափոխական) և կիսելով իր ուսուցիչ Ահմեդ Ջևդեթի այն գնահատականը, որ նրանք երկրում «խառնաշփոթ» ստեղծող «սրիկաներ» (alcaklar) և «թափառականներ» (serseri) են²⁴։

Իր պատմագրական գրառումներում Երեմյան անդրադարձել է նաև «Մարտի 31» դեպքերին և 1909թ. Ադանայի ջարդերին²⁵։ Ինչպես հայտնի է, «Իթթիհատականները», որոնք այդ ջարդերի կազմակերպիչներն էին, փոր-

ծում էին դրանք պատճառաբանել հայերի, իբր, դավադրության մեջ ներգրավվածությամբ: Շերեֆը, որն ամիջականորեն մասնակցել էր այդ հարցը հատուկ ուսումնասիրող կառավարական հանձնաժողովի գեկույցի նախապատրաստական աշխատանքներին, գրում է, որ հայերը քանիցս ապացուցել են Օսմանյան հայրենիքի հանդեպ իրենց տածած նվիրվածությունը (*derkâr olan sadakatları ...*) և զոհ են գնացել անհիմն «կասկածների և գրգռությունների»: Պատմագիրը նշում է նաև, որ այդ գեկույցի տակ ստորագրել են կառավարության մի շարք անդամներ: Մակայն, ինչպես արդարացի նկատում է Վ. Դադրյանը Ադանայի ջարդերին նվիրված իր անդրադարձում, այնտեղ ոչ մի ակնարկ չկար առ այն, «թե եթե հայերը անպարտ էին հապա ուլքե՞ր էին յանցապարտները»²⁶:

Արդուրահման Շերեֆը բացասական գնահատական է տվել նաև օսմանյան Սահմանադրության «հայր» Ահմեդ Միդհաթ-փաշային, ներկայացնելով նրան որպես դավադրության և արյան գնով իշխանության հասած մի գործչի²⁷:

Արդուրահման Շերեֆի վերջին պատմագրական աշխատությունը նրա «Զրույցներ պատմության մասին» գիրքն էր²⁸: Այն Շերեֆի 1921-1922թթ. «Sabah» և «Vakıf» օրաթերթերի համար գրված հոդվածների ժողովածու էր, «ինչ եմ տեսել, ինչ եմ լսել» վերտառությամբ և նվիրված էր հիմնականում 19-րդ դարի պատմությանը: Թուրքիան համեմատելով «երբեմնի հզոր, բայց ներկայումս ծերացած և ատամները թափած առյուծի» հետ և փորձելով բացատրել Թանզիմաթի շրջանի բարեփոխումների անհաջողությունները Շերեֆն ինքն իրեն հարց է տալիս. իսկ կարո՞ղ էին մնան դեղահաբերը (բարեփոխումները Ա.Հ.) փրկել «հիվանդին»: Նրա կարծիքով Թուրքիայի փրկության ճանապարհը «քաղաքակրթության ուղին բռնելն էր» (*medeniyet*): Շերեֆը չի բացահայտում, ասկայն, թե ինչ է մա հասկանում «քաղաքակրթության ուղի» ասելով: Արդուրահման Շերեֆի այս աշխատության մեջ առավել ցայտուն է զգացվում արաբ անվանի պատմագիր-փիլիսոփա Իբն-Խալլունի հայացքների ազդեցությունը²⁹: Ինչպես գրում է թուրք հետազոտող Թ. Աքչամը, մնան տրամադրությունները բնորոշ էին 20-րդ դարասկզբի օսմանյան մտավորականներին, որոնց մեջ կամխորոշված կործանման սպասումը միախառնվում էր նաև իբն-Խալլունի «աստվածային միջամտությամբ»՝ փրկությամբ հասնելու հույսերի հետ³⁰:

Մեր կարգիքով հենց մնան տրամադրությունների լույսի ներքո է պետք դիտարկել Արդուրահման Շերեֆի՝ կյանքի վերջին տարիներին քեմալականների հետ մերձեցումը, և ոչ թե նրա հետևողական հանրապետական (*cumhuriyetçi*) լինելու հանգամանքով, ինչպես դա փորձում են ներկայացնել որոշ թուրք պատմաբաններ³¹:

Արդուրահման Շերեֆի անձը Զեմալ Աթաթուրքի ուշադրությունը գրավում է այն բանից հետո, երբ Շերեֆը, լինելով Ռիզա-փաշայի կաթինե տի անդամ, հրաժարվում է իր ստորագրությունը դնել «Ազգային ուխտով» (*Milli Misak*) պայմանավորված Թուրքիայի սահմանները որոշող փաստաթղթի տակ³²: «Ես արդեն մի ոտքով գերեզմանում եմ, ըստ Միմա Աքչինի

ասում է Շերեֆը,- սրանից հետո ինձ խայտառակ անող որևէ փաստաթղթի տակ չեմ դնի իմ ստորագրությունը»³³։ Միևնույն ժամանակ Անատոլիայում գործող ազգայնական շարժման ղեկավարները ամեն կերպ փորձում էին քողարկել այդ շարժման կապը մախսկին իթթիհադականների հետ³⁴։

Քենալ Աթաթուրքը, կարևորելով Շերեֆի մնացած հեղինակավոր և «մաքուր» կենսագրություն ունեցող մարդու՝ իրենց շարքերի մեջ ներգրավելու խնդիրը, մամակ է գրում վերջինիս, հրավիրելով նրան մասնակցել սկզբում Սիվասի, իսկ այնուհետև երկրորդ գումարման ԹԱՄՄ-ի աշխատանքներին։ Ձեյալ Բայարի հուշագրությունների համաձայն, երբ 1923թ. քննարկվում էր նորաստեղծ պետության կառավարման ձևը, Աթաթուրքի Չանկայա պալատում ներկա էր նաև Արդուրահման Շերեֆը։ Պետության կառավարումը ժողովրդի ձայնով ընտրված մախսազահին համձնելը, ըստ Շերեֆի, ամենաիմաստուն որոշումը կարող է լինել։ «Պետության անունը հառակ է, դա Հանրապետությունն է», - եզրահանգում է Շերեֆը։ Այնուհետև ինքն իրեն հեզնելով, ավելացնում, որ ինքն էլ չէր պատկերացնում, թե այդ աստիճան «հանրապետական» է (cumhuriyetçi)»³⁵։

Այսպիսով, Արդուրահման Շերեֆը թուրք պատմության մեջ մտավ որպես նորաստեղծ պետության «անվանադիր» (dogan çocuğun adını koyan)։

Հատկանշական է, որ վերջին տարիներին Թուրքիայում ծավալվող իսլամականների և քենալականների ինտելեկտուալ վիճաբանություններում հաճախ է շահարկվում Շերեֆի անունը, որն ի դեպ երկար ժամանակ մոռացության էր մատնված։ Իսլամականները շեշտը դնում են նրա պատմա-փիլիսոփայական հայացքների վրա, որոնք համահունչ են «անատոլիական խճանկարի» իրենց կոնցեպտին, քենալականներն իրենց հերթին՝ նրա կարճատև հանրապետական գործունեության վրա։ Մեր կարծիքով, այդ ակնառու թուրք պատմաբանը և պետական գործիչը իր ժամանակի արդյունքն էր, նրա մեջ միախառնված էին առաջադեմ ու հետադիմականը և, իհարկե, մաքուր մտավորական էր իր բոլոր դրսևորումներում։ Արդուրահման Շերեֆի կյանքի, աշխատությունների և գործունեության օբյեկտիվ լուսաբանումը առավել հասկանալի են դարձնում Թուրքիայի պատմության 19-րդ դարի վերջի 20-րդ դարասկզբի բեկումնային դարաշրջանի ստանձնահատկությունները։

ANUSH HOVHANNISJAN

ABDURRAHMAN SHEREF. FROM TANZIMAT TO REPUBLIC

The article is dedicated to the analyses of the biography of Abdurrahman Sheref, the last chronist of the Ottoman Empire. His life (1853-1925) and activities coincided with the crucial period of the Turkish history, marked with the decline of Empire, Ittihadist bloody adventurous rule, Kemalist nationalist movement and declaration of Turkish Republic. All these events among others had their effect on the

foundation of Turkish national historiography too.

The main place in the article is devoted to the conflict between Ottomanist and Pan-Turkist views on history in "Tarih-i Osmani Encümeni", which was headed by Sheref at the time. Sheref's project to prepare a new general history of the Ottoman Empire, including the history of non-Turk peoples, in accordance with the doctrine of Ottomanism seeking to break the barriers between the various communities, was the first but failed attempt in Turkish historiography. From that time Turkist and Pan-Turkist views became the mainstream of Turkish history-writing of that period.

The analyses of Abdurrahman Sheref's ideas can help to have a more complete picture of that important period in the history of Turkey.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 18-րդ դարից սկսած օսմանյան տարեգրությունը կապվում է պետական պաշտոնի հետ, քանի որ կառավարության կողմից նշանակում են հատուկ պատմագիր-տարեգիրներ՝ վականա-մյուվիաներ
2. Հողվածում օգտագործված աղբյուրներից շատերը առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Դրանք օսմաներեն են, ուստի ստագործան տարեգիրը ներկայացվում է մուսուլմանական տարեգրությամբ:
3. Sbu M. H. Ymanç, Abdurrahman Şeref Efendi, Türk Tarih Encümeni Mecmuası, No. 1, Mayıs, İstanbul, 1341; M. Demiryörek, Ölümlüden 78. yılında son vakarı Abdurrahman Şeref Efendi ve Cumhuriyet, "Milli Egitim", 2003, <http://yayim.meb.gov.tr/dergiler/> 158; Abdurrahman Şeref, <http://www.ottoman-historians.com/seref/>
4. Ucm՝ մուսուլմանական գիտական-աստվածաբան:
5. Այդ առումով Եգիպտոսը Օսմանյան կայսրության այն երկրամասն էր, որը «մուսուլմանացիներ» կենտրոնը եվրոպական գրքերով: Մեհմեդ Ալիի կառավարման տարիներից սկսած Եգիպտոսում սկիզբ առավ եվրոպական հեղինակների պատմագիտական աշխատությունների կայսրության պաշտոնական լեզվով օսմաներենով քարգանակելու և հրատարակելու գործը: Sbu Jamal el-din el-Shayyal, Historiography in Egypt in the nineteenth century, in "Historians of the Middle East", New York – Toronto, 1962, pp. 403-421.
6. Sbu E. Kuran, Ottoman Historiography of the Tanzimat Period, in "Historians of the Middle East" ... pp. 422-429.
7. Մասնավորապես Գ. Այվազովսկի. Պատմության օսմանյան պետության, Հ. Ա. Բ., Վենետիկ, 1841: Sbu Ե. Սարգսյան, Հայ թուրքագիտությունը XIX դարում և XX դարասկզբին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. X, Երևան, 1979, էջ 241-267:
8. А. Желтяков, Ю. Петросян, История просвещения в Турции, М., 1961, с. 82.
9. F. Babinger, Die Geschichtsschreiber der Osmanen und ihre Werke, Leipzig, 1927, s. 405.
10. E. Kuran, Ottoman historiography ..., p. 425.
11. Պետք է նշել, որ այդ հասկացությունները վաղուց արդեն հայտնի էին Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդներին, մասամբ էլ լուսարանվում էին թուրքական մամուլի էջերում, հիարկե, մինչև արդյունաժողյան գրաքննության կողմից արգելվելը: Սակայն դասագրքերում դրանց հայտնվելը միանգամայն աննախադաս երևույթ էր: Sbu A. Желтяков, Печать в общественно – политической и культурной жизни Турции, М., 1972; Ю. Петросян, Турецкая публицистика эпохи реформ в Османской империи (конец XVIII – начало XX в.) М., 1985.
12. Tarih-i Osmani Encümeni Mecmuası (այսուհետ՝ TOEM), No. 1, 1 Nisan 1326, s. 2.
13. Խոսքը գնում է կայսրության տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների մասին:
14. İfade-i Meram. TOEM, No 1, 1 Nisan 1326, s. 2.
15. «Տեղասպանություն» եզրը այն ժամանակ չկար: Ahmed Refik, "Kavkasya yollarında" -

- “İki komite, iki kital”, տե՛ս «Հայկական հարց», Երևան, 1996, էջ 275-277:
16. Սույն հոդվածում մենք չենք անդրադառնում Տ. Զեյնեյանի հայացքներին և գործունեությանը: Նրա մասին տե՛ս Z. Toprak, Diran Kelekyan, Fransız Devrimi ve Mülkiye Mektebi, “Tarih ve Toplum”, İstanbul, 1989, cilt 12, sayı 67, s. 39-41; Ա. Ավագյան. Տիրան Զեյնեյանը և օսմանյան ազգայնականությունը. «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», No. 12. Երևան, 2006, էջ 112-120:
 17. Բյուզանդական թագավորությունից քացի անշուշտ, ենթադրվում է, որ պետք է խոսվեր մահ Անիի հայկական թագավորության մասին: Հայերը, սակայն, հիշատակվում են լոկ որպես տեղաբնակ ժողովուրդներից մեկը, քանի որ դեռևս Արդուլ Համիդ II ժամանակ արգելված էր պատմության և աշխարհագրության վերաբերյալ «Հայաստան» և նման անունների հիշատակումը: Տես Ա. Փափագյան, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19 – դարեր). Երևան, 1999, էջ 237:
 18. «Ընկերությունը» թև հաղարկեցրեց իր գործունեությունը 1928թ. քայք, փաստորեն. մրա իրավահաջորդը դարձավ հանրապետական Թուրքիայում Զեմալ Աթաթուրքի կողմից ստեղծված «Türk Tarih Kurumu»-ն («Թուրքական պատմական ընկերությունը»):
 19. Köpek Muhtra, “Türk Yurdu”, c. 4, No. 23, 1913.
 20. H. Akbayrak, Tarih-i Osmanî Encümeni'nin “Osmanlı Tarihi” yazma serüveni, “Tarih ve Toplum”, No. 42, 1987, s. 47.
 21. Ahmed Refik, Encümen Raporu, TTEM, No 19, s. 161-165.
 22. Տե՛ս А. Оганесян, К истории зарождения националистического (поркистского) направления в турецкой историографии (конец XIX — начало XX вв), «Լրաբեր հասարակական գիտությունների», No. 2, Երևան, 1996, էջ 74-79; Ա. Հովհաննիսյան, Ռաիզմ և ցեղասպանություն, «1915թ. հայոց ցեղասպանությունը (պատմության և պատմագրության հարցեր)», Երևան, 1995թ., էջ 41:
 23. Abdurrahman Şeref, <http://www.ottomanhistorians.com/seref>
 24. T. Akçam, Türk Ulusal Kimliği ve Ermeni Sorunu, İstanbul, 1992, s.39.
 25. Abdurrahman Şeref, 31 Mart Olayı, Adana vaka'sı, <http://www.ottomanhistorians.com/seref>: «Մարտի 31»-ի դավադրության մասին տե՛ս В. Шпилюкова, Младотурецкая революция (1908-1909 гг.), М., 1977, с. 221-239.
 26. Վ. Տադրեան, Հայկական Զեղասպանութիւնը Խորհրդարանային ու Պատմագիտական Զննարկումներով, Berkley-Massachusetts. 1995, էջ 112:
 27. А. Оганесян, Турецкий историк о политических событиях 1876-1878 гг. в Османской империи, «Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XVI, Երևան, 1996, էջ 143-149:
 28. Adurrahman Şeref, Tarih Musahabeleri, İstanbul, 1339.
 29. Իրն-Խալդունի կարծիքով պետությունները, ինչպես և մարդիկ, ունենում են կյանքի (գոյատևման) տարբեր ժամանակաշրջաններ՝ երիտասարդություն, ծաղկում շրջան. ծերություն և մահ, տե՛ս F. Rosental, The influence of the biblical tradition on Muslim Historiography, in “Historians of the Middle East”, p. 40.
 30. T. Akçam, Türk Ulusal Kimliği ..., s. 56.
 31. М. Демирюрек, Олмантан 78. yılında...
 32. М. Гасратян, С. Орешкова, Ю. Петросян, Очерки истории Турции, М., 1983, с. 168.
 33. М. Демирюрек, Олмантан 78. yılında ...
 34. Հետազոտող Ցյուրիքի կարծիքով, «թուրք ազգային շարժումը... իբրիհադական անցյալ ունեցող տարբեր կազմակերպությունների և անձերի գործունեության արդյունք էր», տե՛ս E. Zürcher, The Unionist Factor. The role of Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926, Leiden, 1984, p. 118.
 35. М. Демирюрек, Олмантан 78. yılında ...